ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

11/07/2019

Քաղաք Երևան, հուլիսի տասնմեկ, երկու հազար տասնինը թվական

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարությունում 2019 թվականի հուլիսի 11-ին անցկացվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում՝ ՀՀ արդադարադատության նախարարի՝ 2019թվականի հունիսի 26-ի թիվ 236-Ա հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների մասնակցությամբ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Տիգրան Խաչիկյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ)

Կարեն Հակոբյան - ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետ

Լուսինե Մարտիրոսյան - ՀՀ արդարադատության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Շուշանիկ Ղուկասյան - ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Մարիամ Գալստյան - ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ (Հանձնաժողովի քարտուղար)

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

1. Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. Հանձնաժողովի նախագահն արձանագրեց, որ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներգրավման նպատակով հայտ են ներկայացրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հետաքննող լրագրողներ», «Հայկական հոգեբուժական ասոցիացիա», «Մեհրաբյան գիտա-ուսումնական կենտրոն», հասարակական կազմակերպությունները և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը :

3. Հաշվի առնելով, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հայկական հոգեբուժական ասոցիացիա» , «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունների և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերն ամբողջական են և համապատասխանում են ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշման հավելված 2-ի 7-րդ կետի պահանջներին, իսկ «Մեհրաբյան գիտա-ուսումնական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են (ներկայացված փաստաթղթերում ներառված տեղեկատվությունը բավարար չէ գնահատելու հակակոռուպցիոն ոլորտի երեք և ավելի տարվա գործունեության փորձի առկությունը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում իրականացված երեք և ավելի ծրագրերի իրականացումը)՝ Հանձնաժողովը միաձայն՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հայկական հոգեբուժական ասոցիացիա» , «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունների և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերն ամբողջական են և համապատասխանում են ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշման հավելված 2-ի 7-րդ կետի պահանջներին:
2. «Մեհրաբյան գիտա-ուսումնական կենտրոն» հասարակական կազմակերպությանը տրամադրել երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու համար:

Արձանագրությունը բաղկացած է 4 էջից:

Նիստը նախագահող,

Հանձնաժողովի նախագահ՝ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ